



**ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԶԻՆՎՈՐԻ ՄԱՅՐ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**ԲԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
(Օգնություն զինվորին)**

Երկրորդ հրատարակություն

ԵՐԵՎԱՆ, 2010

Գրքույկը հրատարակվել է Հայաստանի «Ձինվորի մայր» հասարակական կազմակերպության կողմից

Գրքույկի հրատարակմանն աջակցել է Բաց
Հասարակության Ինստիտուտի
Օժանդակության Հիմնադրամը

Գրքույկում ներկայացված են ՀՀ զինվորական օրենսդրության այն կետերը, որոնց իմացությունը թույլ կտա ՀՀ ազգային բանակում ծառայող զինվորներին կանխելու իրենց իրավունքների նկատմամբ դրսևորված խախտումները, ինչպես նաև պաշտպանելու նրանց իրավունքը հնարավոր ոչ կանոնադրական իրադրություններում:

Մեր սիրելի որդիներ.

Յուրաքանչյուր զինվոր ամենից առաջ իր մոր
զավակն է և ապա՝ իր երկրի ազատ քաղաքացին:

Ուշադիր կարդացեք այս գրքույկը:

Հետևելով օրենքին, դուք ինքներդ կարող եք
պաշտպանել ձեր իրավունքները:

Հարգեք ձեր ընկերներին: Հնարավոր է, որ նրանց
հետ դուք բարեկամություն կանեք ողջ կյանքում:

Կոչումով բարձր զինվորականների հետ շփվելիս
պահեք ձեզ հարգալից և արժանապատվորեն: Թույլ
մի տվեք, որ ձեզ վիրավորեն: Հպարտ եղեք, որ դուք
հայրենիքի պաշտպաններն եք:

Կոփվեք ֆիզիկապես և եղեք ամուր:

Ցանկանում ենք ձեզ քաջառողջություն, բարի
ծառայություն և պատվով վերադարձ:

Հայաստանի
«Ձինվորի մայր» ՀԿ

- Յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:

ՀՀ Սահմանադրություն, հ. 46

- Զինապարտությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու քաղաքացիների սահմանադրական պարտականությունն է:

ՀՀ Օրենքը ՁՄ, հ.3

- Պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան (բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքի) արական սեռի զորակոչիկներն ու մինչև 35 տարեկան առաջին խմբի պահեստազորի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում:

ՀՀ Օրենքը ՁՄ, մաս 1.

- Զինվորական ծառայությունը պետական ծառայության հատուկ տեսակ է:

ՀՀ Օրենքը ՁՄ, հ.1, մաս 1.

- Զինվորական ծառայության մեջ գտնվող քաղաքացիները՝ ըստ շնորհված զինվորական կոչումների, համարվում են շարքային,

Ենթասպայական կամ սպայական կազմերի
զինծառայողներ:

ՀՀ ՁԾԱՄ , հ. 4, մաս 6

- Առաջին անգամ զինվորական ծառայություն
անցնող քաղաքացիները Հայաստանի
Հանրապետության պետական դրոշի և
զորամասի մարտական դրոշի առջև տալիս են
հավատարմության երդում , որի տեքստը
հաստատվում է օրենքով:

ՀՀ ՁԾԱՄ, հ. 1, մաս 2

- Ոչ ոք իրավասու չէ սահմանափակել
զինծառայողների իրավունքներն ու
պարտականությունները, որ սահմանված են
Հայաստանի Հանրապետության
սահմանադրությամբ եւ օրենսդրությամբ:
Ջինծառայողների կողմից իրենց
իրավունքների օգտագործումը չպետք է վնաս
հասցնի հասարակության, պետության
իրավունքներին եւ օրինական շահերին,
զինվորական ծառայությանը, ուրիշ
զինծառայողների եւ այլ քաղաքացիների
իրավունքներին:

ՀՀ ՁՈՒ ՆԾԿ, հ. 6

- Պետությունը երաշխավորում է
զինծառայողների սոցիալական եւ իրավական
պաշտպանությունը, միջոցներ է ձեռնարկում
նրանց համար բավարար եւ արժանի
կենսամակարդակ ապահովելու, ծառայության
եւ կենցաղի պայմանների բարելավման

ուղղությամբ: Ձինծառայողների
իրավունքների ապահովումը եւ պահպանումը
դրվում են տարածքային կառավարման
մարմինների, զինվորական կառավարման
մարմինների, հրամանատարների (պետերի) եւ
իրավապահ մարմինների վրա:

ՀՀ ՁՈՒ ՆԾԿ, հ. 10

- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի
զինծառայողը ծառայության ժամանակ
ղեկավարվում է օրենքների, զինվորական
կանոնադրությունների պահանջներով եւ
հրամանատարների հրամաններով:

ՀՀ ՁՈՒ ՆԾԿ, հ. 13

- Ձինվորական ծառայության սկիզբ է համարվում՝
- զինվորական ծառայության զորակոչված
քաղաքացիների համար՝ ծառայության վայր
մեկնելու համար զինվորական կոմիսարիատ
ներկայանալու օրը.
- պայմանագրային զինվորական ծառայության
ընդունվող քաղաքացիների համար՝ պայմանագիրն
ուժի մեջ մտնելու օրը.
- ռազմաուսումնական հաստատություններ
ընդունված քաղաքացիների համար՝ տվյալ
ռազմաուսումնական հաստատություններում
սահմանված կարգով որպես կուրսանտ գրանցվելու
օրը:

ՀՀ ՁԾԱՄ, հ.5, մաս 1

- Զինվորական ծառայությունը բաղկացած է ժամկետային և պահեստազորային զինվորական ծառայությունից: Ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայությունից:

ՀՀ ԶԾԱՄ, հ. 4, մաս 1

- Պարտադիր զինվորական ծառայություն է համարվում զինված ուժեր և այլ զորքեր զորակոչված շարքային ու սպայական կազմերի, ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների զինվորական ծառայությունը: Պարտադիր զինվորական ծառայությունը կարող է փոխարինվել այլընտրանքային ծառայությամբ:

ՀՀ ԶԾԱՄ, հ.4, մաս 2

- Պարտադիր զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է շարքային կազմի համար՝ 24 ամիս: Ընդհանուր ծառայության դեպքում կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունը կարող է երկարաձգվել մինչև երկու ամիս ժամկետով, իսկ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով՝ մինչև 1 ամիս ժամկետով:

ՀՀ ԶԾԱՄ, հ.4, մաս 3

- Պայմանագրային զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում և այլ զորքերում կամավոր հիմունքներով զինվորական ծառայություն անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմերի /այդ թվում՝ ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինծառայողների/ և կանանց զինվորական ծառայությունը:

Պայմանագրային զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է՝

- ավագների, սերժանտների և շարքայինների համար՝ 2-3 տարի, իսկ առանձնահատուկ դեպքերում՝ 3-6 ամիս՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի որոշմամբ.
- ռազմաուսումնական հաստատություններն ավարտած սպաների համար՝ 20 տարի (ներառյալ՝ ուսման ժամկետը՝ որպես պարտադիր զինվորական ծառայություն):

ՀՀ ՁԾԱՄ, հ. 4, մաս 3

- Ձինվորական ծառայության ընդհանուր ժամկետում ներառվում է զինծառայողի՝ ժամկետային զինծառայության ամբողջ ժամանակաշրջանը՝ անկախ ընդհատումներից: Ձինվորական ծառայության ընդհանուր ժամկետը որոշվում է օրացուցային հաշվարկով:

ՀՀ ՁԾԱՄ, հ.6, մաս 1

- Ձինծառայողներին զինված ուժերի և այլ զորքերի շարքերից արձակում է զորամասի հարմանատարը՝ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ Օրենքը ՁՄ, հ.23, կ.1

- Պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողները ժամկետից շուտ արձակվում են, եթե նրանք կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից հետագա զինվորական ծառայության համար ճանաչվում են ոչ

պիտանի՝ առողջական վիճակի պատճառով, ինչպես նաև, եթե ծառայության ընթացքում ձեռք են բերել օրենքով նախատեսված զինվորական ծառայությունից ազատվելու կամ տարկետում ստանալու իրավունք:

ՀՀ Օրենքը ՁՄ, հ.23, մաս 2

- Պարտադիր զինծառայողի ծառայության ընթացքում խրախուսման կարգով՝ ոչ պակաս, քան 6 ամսվա բարեխիղճ ծառայության դեպքում, կարող է տրվել մեկ հիմնական արձակուրդ՝ հետևյալ տևողությամբ.
 - զինվորներին՝ 15 օր.
 - սերժանտներին և ավագներին՝ 20 օր.

ՀՀ ՁԾԱՄ, հ.45, մաս 1

- Պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմին լրացուցիչ արձակուրդ տրվում է՝
 - 1) հրամանատարի (պետի) որոշմամբ՝ մինչև 5 օր տևողությամբ՝
 - զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշների համար,
 - ելնելով ընտանեկան պայմաններից (ամուսնացածներին՝ 6 ամիսը մեկ անգամ).
 - 2) պաշտպանության հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի կողմից նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ ՁԾԱՄ, հ.45, մաս 2

- Հերթական /հիմնական/ և լրացուցիչ արձակուրդ մեկնող զինծառայողներին արձակուրդի վայր

մեկնելու և արձակուրդից վերադառնալու համար տրվում է լրացուցիչ ժամանակ՝

1. 30-120 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ 1 օր տևողությամբ,
2. 121-200 կմ մեկնելու և վերադառնալու համար՝ մինչև 2 օր տևողությամբ,
3. 200 և ավելի կմ մեկնելու և վերադառնալու համար՝ մինչև 3 օր տևողությամբ,

ՀՀ ՊՆ Հրաման 871, հավ. 1, հոդ. 3

- Բարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող, վարժական հավաքներ անցած ու սահմանված ստուգարքները հաջող հանձնած զինվորներին և սերժանտներին ժամկետային զինվորական ծառայության ավարտից առաջ պահեստազոր տեղափոխվելիս շնորհվում է սպայի կամ ենթասպայի կոչում: Պահեստազոր տեղափոխվելիս սպայի կամ ենթասպայի կոչում չստացած անձինք, կարող են ներգրավվել սպաների և ենթասպաների պատրաստման համար կազմակերպվող զինապարտների վարժական հավաքներին:

ՀՀ Օրենքը ՁՄ, հ.23, մաս 6

- Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ժամանակ բնակության վայրին մոտ գտնվող զորամասում ծառայելու արտոնություններից օգտվում են՝

ա/ միայնակ և տարիքային կենսաթոշակի անցած կամ երրորդ խմբի հաշմանդամ հոր կամ մոր միակ զավակը.

բ/ Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության, զինված ուժերում և այլ զորքերում ծառայության ընթացքում , ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված /նահացած/ հայր/մայր/ կամ եղբայր /քույր/ ունեցող զորակոչիկները.

գ/ ամուսնացած և մեկ երեխա ունեցող զորակոչիկները.

դ/ երկկողմ և միակողմ ծնողազուրկ զինակոչիկները.

ՀՀ Օրենքը ՁՄ, հ.11, մաս 7

- Զինված ուժեր կամ այլ զորքեր միաժամանակ զորակոչվող եղբայրները, իրենց ցանկությամբ, ծառայության են զորակոչվում միևնույն զորամաս:

ՀՀ Օրենքը ՁՄ, հ.11, մաս 8

- Յուրաքանչյուր զինծառայող իրավունք ունի անձամբ կամ իր կողմից լիազորված անձի միջոցով բողոքելու /զանգատվելու/ հրամանատարի /պետի/ կամ այլ զինծառայողների` իր նկատմամբ կատարած անօրինական գործողությունների, օրենքով սահմանված իր իրավունքների և արտոնությունների սահմանափակման համար:
- Բողոքը /զանգատը/ տրվում է այն անձի անմիջական պետին, որի գործողությունները բողոքարկվում

/զանգատարկվում/ են, իսկ եթե բողոքարկողը /զանգատվողը/ չգիտի, թե ում մեղքով են խախտվել իր իրավունքները, ապա բողոքը /զանգատը/ ուղարկվում է վերադաս հրամանատարությանը: Արգելվում է ներկայացնել խմբային բողոքներ /զանգատներ/:

ՀՀ ՁՈՒ ԿԿ, հ. 116

- Բողոքող /զանգատվող/ զինծառայողն իրավունք ունի՝
 - իր փաստարկներն անձամբ շարադրել բողոքը /զանգատը/ ստուգողին.
 - ծանոթանալ բողոքի /զանգատի/ ստուգման նյութերին.
 - ներկայացնել լրացուցիչ նյութեր կամ միջնորդել հրամանատարի /պետի/ կամ բողոքը /զանգատը/ քննարկող մարմնի կողմից այդիպիսի նյութեր պահանջելու համար.
 - օրենքով սահմանված կարգով պահանջել վնասի հատուցվում:

ՀՀ ՁՈՒ ԿԿ, հ. 117

- Բողոք /զանգատ/ ներկայացրած զինծառայողը չի ազատվում հրամանները և ծառայողական պարտականությունները կատարելուց.
Արգելվում է բողոք /զանգատ/ ներկայացնել մարտական հերթապահության, շարքում եղած ժամանակ /բացառությամբ՝ զինծառայողների հարցման ժամանակ տրված բողոքների /զանգատների/, պահակախմբում, ինչպես նաև օրվա վերակարգում ու պարապմունքներում գտնվելու ժամանակ:

ՀՀ ՁՈՒ ԿԿ, հ. 118

- Ջինժառայողների կարգապահական կոպիտ զանցանքներն են՝
 - ինքնական բացակայությունը.
 - արձակուրդից, գործուղումից և բուժհիմնարկից ժամկետին ծառայությանը չներկայանալը.
 - ծառայությունից ուշանալը կամ ինքնական հեռանալը.
 - պահակային, ներքին ծառայությունների և մարտական հերթապահության կատարման կանոնների խախտումը.
 - ալկոհոլի, թմրանյութերի կամ թունանյութերի օգտագործման հետևանքով անսթափ վիճակում ծառայողական պարտականությունների կատարումը.
 - անվտանգության պահանջների խախտումը, որը հանգեցրել է աշխատունակության կորստին.
 - զինժառահողների փոխհարաբերությունների կանոնադրական կանոնների խախտումը.
 - ռազմական գույքի վատնումը կամ կորուստը.
 - զանցանքները հասարակական վայրերում՝ ծառայությունից դուրս:

ՀՀ ՁՈՒ ԿԿ հավելված 5, կ. 1

- Ջինվորների, սերժանտների նկատմամբ կիրառվում են խրախուսանքի հետևյալ միջոցները՝
 - նախկինում տրված կարգապահական տույժի հանում.
 - շնորհակալության հայտնում.
 - ժամկետային ծառայության զինժառայողի կողմից զինվորական պարտքի օրինակելի կատարման և ստացած խրախուսանքների մասին նրա բնակության կամ նախկին աշխատանքի /ուսման / վայր հայտնում.

- պատվոգրերով, արժեքավոր նվերներով կամ դրամով պարգևատրում.
- պարգևատրում զինծառայողի անձնական լուսանկարով՝ նկարված զորամասի բացված մարտական դրոշի մոտ.
- զինվորներին եֆրեյտորի զինվորական կոչման շնորհում.
- սերժանտներին պաշտոնեական հաստիքով նախատեսվածից մեկ աստիճանով բարձր հերթական զինվորական կոչման շնորհում.
- գերազանցիկ կրծքանշանով պարգևատրում.
- զորամասի պատվո գրքում զինվորների, սերժանտների ազգանունների գրանցում.
- ժամկետային ծառայության զինծառայողներին /բացառությամբ ռազմաուսումնական հաստատությունների ուսանողների/ հիմնական արձակուրդի ժամկետին 5 օր ավելացում;

ՀՀ ՁՈՒ ԿԿ, հ. 20

ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի համար սահմանված են ամսական դրամական բավարարման հետևյալ չափերը՝¹,

շարքային	3400 դրամ
եֆրեյտոր	3600 դրամ
կրտ.սերժանտ	4000 դրամ
սերժանտ	4500 դրամ
ավագ սերժանտ	5000 դրամ
ավագ	5300 դրամ

ՀՀ կառավարության 25.12.2007 թիվ 1554-Ն Որոշում

¹ Այդ գումարից 1000 դրամը նախատեսված է որպես ծխախոտի ծախսի փոխհատուցում

Գրքույկում բերված հապավումները

ՀՀ Օրենքը ՁՄ	ՀՀ Օրենքը «Զինապարտության մասին»
ՀՀ ՁՈՒ ՆԾԿ	ՀՀ Ձինված Ուժերի Ներքին Ծառայության Կանոնակարգ
ՀՀ ՁԾԱՄ	ՀՀ Օրենքը «Զինվորական ծառայում անցնելու մասին»
ՀՀ ՁՈՒ ԿԿ	ՀՀ Ձինված Ուժերի Կարգապահական Կանոնակարգ

***Եթե խախտվել են ձեր իրավունքները,
եթե դուք տուժել եք ոչ կանոնադրական
հարաբերությունների դրսևորումներից՝
զանգահարեք հետևյալ
հեռախոսահամարներով.***

Հայաստանի «Զինվորի մայր»
հասարակական կազմակերպություն
52 99 31

ՀՀ Պաշտպանության նախարարին առընթեր
հասարակական հորհուրդ
52 34 86, 52 34 82

ՀՀ ՊՆ թեժ գիծ
29 43 95, 29 46 86

Հայաստանի Հելսինկյան Ընկերակցություն
56 03 72

Վանաձորի Հելսինկյան Ընկերակցություն
0322 4 22 68

Մարդու իրավունքների պաշտպանության
Ա. Սախարովի անվան Հիմնադրամ
54 29 36

Մարդու իրավունքների պաշտպանության
Ա. Սախարովի անվան Հիմնադրամ (Գյումրի)
0312 5 94 50, 0312 5 69 17